Արձանագրություն N 3

«Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի կողմից կաուստիկ սոդայի, ծծմբական թթվի, աղաթթվի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԵՐՋԷԿ-ԳՀԱՊՁԲ 22/17» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման

ք. Երևան

06.09.2017թ.
ժ. 16:00-ին

Մասնակցում էին

| | |
|---|---|
| Հանձնաժողովի նախագահ՝ | Ա. Գևորգյանը |
| Հանձնաժողովի անդամներ՝ | Ս. Մուրադյանը |
| | Ա. Վարդապետյանը |
| | Վ. Գերոյանը |
| | Բ. Հարությունյանը |
| Հանձնաժողովի քարտուղար՝ | Ա. Պետրոսյանը |

Գնումների պլանով նախատեսված

- կաուստիկ սոդայի մեկ միավորի համար նախատեսված նախահաշվային գինը կազմել է՝ 337 ՀՀ դրամ,
- ծծմբական թթվի մեկ միավորի համար նախատեսված նախահաշվային գինը կազմել է՝ 95 ՀՀ դրամ,
- աղաթթվի մեկ միավորի համար նախատեսված նախահաշվային գինը կազմել է՝ 200 ՀՀ դրամ,

Նիստի օրակարգը

Հարց 1. «ԵՐՋԷԿ-ԳՀԱՊՁԲ 22/17» ծածկագրով ընթացակարգին (այսուհետ՝ Ընթացակարգ) մասնակցելու նպատակով էլեկտրոնային հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները (անունները) և հասցեները:

Հարց 2. Տվյալներ՝ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին:

Հարց 3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը:

Հարց 4. Հանձնաժողովի նիստը կասեցնելու մասին:

Հարց 5. Հանձնաժողովի հաջորդ նիստի վայրը, օրը և ժամը:

***<u>Հարց </u>1. «ԵՐՋԷԿ-ԳՀԱՊՁԲ 22/17» ծածկագրով ընթացակարգին (այսուհետ՝ Ընթացակարգ) մասնակցելու նպատակով էլեկտրոնային հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները (անունները) և հասցեները:***

1.1

| Հ/հ | Մասնակցի անվանում | հասցեներ |
|---|---|---|
| 1. | «Ալֆա Թրեյդ» ՍՊԸ | --------------------------- |
| 2. | «Կենցաղային Քիմիայի գործարան» ՍՊԸ | ք. Երևան, Արշակունյաց 125ա |
| 3. | «Յունիքիմ» ՍՊԸ | ք. Երևան, Արշակունյաց 278 |
| 4. | «ԹԱԳ ՀԷՄ» ՍՊԸ | ք. Երևան, Լենինգրադյան 31/7 |
| 5. | «Գ. Նազարյան և ընկերներ» ՍՊԸ | ք. Երևան, Բագրատունյանց փող. 70/22 |

***Հարց 2. Տվյալներ՝ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին:***

2.1 «Ալֆա Թրեյդ» ՍՊԸ-ի կողմից էլեկտրոնային հայտով ներկայացվել են ՌԴ ռեզիդենտ «Տրանզիտ» ՍՊԸ-ին պատկանող փաստաթղթեր: Միաժամանակ, «Ալֆա Թրեյդ» ՍՊԸ-ն էլեկտրոնային հայտով չի ներկայացրել որևէ փաստաթուղթ, ինչը կհավաստեր նրա և «Տրանզիտ» ՍՊԸ-ի միջև ցանկացած տեսակի իրավական կապի մասին: Հետևաբար Հանձնաժողովը, հաշվի առնելով վերը շարադրվածը և հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասը, որոշեց «Ալֆա Թրեյդ» ՍՊԸ-ի հայտը գնահատել հրավերով նախատեսված պայմաններին չհամապատասխանող և մերժել:

2.2 Հանձնաժողովն արձանագրեց, որ «Կենցաղային Քիմիայի գործարան», «Յունիքիմ», «ԹԱԳ ՀԷՄ» և «Գ. Նազարյան և ընկերներ» ՍՊԸ-ների էլեկտրոնային հայտերը ներկայացված են հրավերի պահանջներին համապատասխան, որոնցում առկա են հրավերով նախատեսված փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0*:*

***Հարց 3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը:***

| Հ/հ | Մասնակցի անվանումը | 1-ին չափաբաժին՝ կաուստիկ սոդա | | | 2-րդ չափաբաժին՝ ծծմբական թթու | | | 3-րդ չափաբաժին՝ աղաթթու | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | Արժեքը (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) /տառերով և թվերով/ | ԱԱՀ** /տառերով և թվերով/ | Ընդհանուր գինը /տառերով և թվերով/ | Արժեքը (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) /տառերով և թվերով/ | ԱԱՀ** /տառերով և թվերով | Ընդհանուր գինը /տառերով և թվերով/ | | | |
| 1 | «Յունիքիմ» ՍՊԸ | 5 062 500 (հինգ միլիոն վաթսուներկու հազար հինգ հարյուր) | 1 012 500 (մեկ միլիոն տասներկու հազար հինգ հարյուր) | 6 075 000 (վեց միլիոն յոթանասունհինգ հազար) | 3 204 000 (երեք միլիոն երկու հարյուր չորս հազար) | 640800 (վեց հարյուր քառասուն հազար ութ հարյուր) | 3 844 800 (երեք միլիոն ութ հարյուր քառասուն չորս հազար ութ հարյուր | --- | | |
| 2 | «Ալֆա Թրեյդ» ՍՊԸ | ------ | ----- | ----- | ----- | ------ | -------- | ------ | ------- | ----- - |
| 3 | «Կենցաղային | 2 981 250 | 596 250 | 3 577 500 | 2 865 000 | 573000 | 3 438 000 | | | |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Քիմիայի գործարան» ՍՊԸ | (երկու միլիոն ինը հարյուր ութսունմեկ հազար երկու հարյուր հիսուն) | (հինգ հարյուր իննսունվեց հազար երկու հարյուր հիսուն) | (երեք միլիոն հինգ հարյուր յոթանասունյոթ հազար հինգ հարյուր) | (երկու միլիոն ութ հարյուր վաթսունհինգ հազար) | (հինգ հարյուր յոթանասուներեք հազար) | (երեք միլիոն չորս հարյուր երեսունութ հազար) | | | |
| 4 | «Գ. Նազարյան և ընկերներ» ՍՊԸ | 4 374 000 (չորս միլիոն երեք հարյուր յոթանասունչորս հազար) | 874800 (ութ հարյուր յոթանասուն չորս հազար ութ հարյուր) | 5 248 800 (հինգ միլիոն երկու հարյուր քառասուն ութ հազար ութ հարյուր) | 3 312 000 (երեք միլիոն երեք հարյուր տասներկու հազար) | 662400 (վեց հարյուր վաթսուն երկու հազար չորս հարյուր) | 3 974 400 (երեք միլիոն ինը հարյուր յոթանասունչորս հազար չորս հարյուր) | | | |
| 5 | «ԹԱԳ ՀԷՄ» ՍՊԸ | | | | 11 400 000 (տասնմեկ միլիոն չորս հարյուր հազար) | 2 280 000 (երկու միլիոն երկու հարյուր ութսուն հազար) | 13 680 000 (տասներեք միլիոն վեց հարյուր ութսուն հազար) | 83 333 33(ութսուներեք հազար երեք հարյուր երեսուն երեք դրամ և երեսուն երեք լումա) | 16 666.67 (տասնվեց հազար վեց հարյուր վաթսունվեց հազար դրամ և վաթսունյոթ լումա) | 100 000 (մեկ հարյուր հազար) |

***Հարց 4. Հանձնաժողովի նիստը կասեցնելու մասին:***

Հանձնաժողովը, հաշվի առնելով այն հանգամանքը, որ մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են տվյալ ընթացակարգի 2-րդ չափաբաժնով ծծմբական թթվի համար նախատեսված գնման հայտով սահմանված գինը, որոշեց՝

- Ղեկավարվելով «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու և ՀՀ կառավարության 2011թ-ի փետրվարի 10-ի թիվ 168-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության 2017թ-ի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի «բ» պարբերությամբ՝ նիստը կասեցնել:
- Հանձնարարել գնահատող հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Պետրոսյանին՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում բավարար գնահատված բոլոր մասնակիցներին էլեկտրոնային ձևով միաժամանակ ծանուցել գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման օրվա, ժամի և վայրի մասին:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

***Հարց 5. Հանձնաժողովի հաջորդ նիստի վայրը, օրը և ժամը:***

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Հանձնաժողովը որոշեց բանակցությունների վարման նպատակով հաջորդ նիստը նշանակել 14.09.2017թ. ժամը 10:00-ին, ք. Երևան, Արին Բերդի 3-րդ նրբանցք, թիվ 3 հասցեում գտնվող վարչական շենքում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

Հանձնաժողովի

Նախագահ Ա. Գևորգյան

Անդամներ՝ Ս. Մուրադյան

Ա. Վարդապետյան

Վ. Գերոյան

Բ. Հարությունյան

Քարտուղար՝ Ա. Պետրոսյան